N-ARM-2025-3032

«Ա.Դ. ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« Մարդու իրավունքների պաշտպանություն և քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագիր

«ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ



Գավառ

2025

Նախաբան

Հետազոտությունն իրականացվել է «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի Հետազոտական-վերլուծական կենտրոնի (ՀՎԿ) կողմից՝ երիտասարդ հետազոտողների ներգրավմամբ: Աշխատանքներն համակարգել է Գեղարքունիքի մարզում ՀՎԿ համակարգող Վարդան Գարեյանը:

Թեման ընտրվել է՝ ելնելով նրա արդիականությունից և հետազոտական թիմի հետաքրքրվածությունից:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել կրթական գործընթացում արհեստական բանականության կիրառման դրական և բացասական ազդեցությունները կրթական հաստատություններում դասավանդողների և սովորողների շրջանում:

Հետազոտությունն իրականացվել է Գավառ համայնքում՝ 2025թ.-ի հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է գլխավորապես նրանով, որ 21-դարի կրթական տարածքում արհեստական բանականությունը (հաջորդիվ՝ ԱԲ) վերածվում է ոչ միայն տեխնոլոգիական նորամուծության, այլև հնարավորությունների ու մարտահրավերների ամբողջական համակարգի: Արժանահիշատակ է aistatistics.ai կայքում 2025թ.-ին հրապարակված «Արհեստական բանականությունը կրթության վիճակագրության մեջ 2025: Աճ, կիրառում և ազդեցություն» վիճակագրական զեկույցը (հեղինակ՝ Թոդ Բենսոն)[1], ըստ որի՝ ԱԲ-ն արագորեն ներթափանցում է կրթական գործընթաց: Դասավանդողների մոտ 60%-ը ԱԲ-գործիքներ են օգտագործում իրենց դասընթացներում, իսկ մոտ 44%-ը ԱԲ-ն կիրառում է հետազոտությունների ընթացքում՝ ուսուցման նյութեր, դասացուցակներ կամ գնահատումներ պատրաստելու համար: Նույն վիճակագրությունը ցույց է տալիս, որ կրթության ոլորտի ներկայացուցիչների 65%-ը մտահոգված է հեղինակային իրավունքի և մտավոր սեփականության հարցերով, իսկ 62%-ը՝ միջանձնային հաղորդակցության նվազմամբ:

ԱԲ-ի ներմուծումը կրթական ոլորտ նաև վերափոխում է սովորելու հիմունքները՝ դարձնելով այն ավելի անհատականացված, տվյալահեն և ճկուն: ԱԲ-ն կարող է բարելավել անհատական ուսումնական արդյունքները, քանի որ տեխնոլոգիաները հարմարեցնում են բովանդակությունը՝ ըստ յուրաքանչյուր սովորողի կարիքների և ուսումնական տեմպի: Միևնույն ժամանակ՝ ԱԲ-ի կիրառումը կրթության մեջ ենթադրում է մեծ պատասխանատվություն: Փորձագետները ընդգծում են, որ չնայած ԱԲ-ի լայն տարածմանը և մեծ հետաքրքրությանը, շատ դասավանդողներ և սովորողներ դեռևս չունեն բավարար գրագիտություն այդ տեխնոլոգիաներն արդյունավետ և պատասխանատու ձևով օգտագործելու համար:

Անշուշտ, ԱԲ-ի մուտքն ուսումնառության գործընթաց ունի ինչպես դրական ազդեցություն, ներառյալ՝ հնարավորությունները, արդիականացումը, անհատականացումը, ուսուցիչներին աջակցությունը, այնպես էլ մարտահրավերներ, որպիսիք են՝ էթիկական խնդիրները, տվյալների գաղտնիության խաթարումը, դասավանդողների դերի վերափոխումը:

Սույն հետազոտության արդյունքները հիմնված են ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի կրթական հաստատություններում սովորողներից և դասավանդողներից հավաքագրված պատասխանների, ինչպես նաև ոլորտային փաստաթղթերի ու հոդվածների ուսումնասիրության վրա:

[1] AI in Education Statistics 2025 – Growth, Adoption & Impact 2025թ. Ապրիլի 5, https://aistatistics.ai/education/?utm_source

1. Քանակական հարցումներ

Հարցումներն իրականացվել են «google forms» էլեկտրոնային հարթակում՝ հետազոտական թիմի կողմից պատրաստված հարցաթերթով (տե՛ս Հավելված 1)։

Հարցումն ամփոփվել է՝ ամենաշատ պատասխաններ պարունակող տարբերակից մինչև ամենաքիչ պատասխաններ ենթադրող տարբերակի տոկոսային արտահայտմամբ։

Հարցմանը մասնակցել են համայնքի 28 կրթական հաստատությունների՝ Գավառի պետական համալսարանի, Գավառում գործող երեք քոլեջների և Գավառի 24 հանրակրթական դպրոցների թվով 358 սովորողներ։ Ստորև ներկայացվում է կրթական հաստատությունների ներգրավվածությանը վերաբերող գրաֆիկական պատկերը։



Հարցման մասնակիցների տարիքային խմբերն են՝ 10-17, 18-25։ Հարցման մասնակիցների թվում գերակշռում են 13-18 տարեկանները, ինչը տեսանելի է ներկայացված գրաֆիկական պատկերում.



Հարցման մասնակիցների 73,9%-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 26,1%-ը՝ արական։



Հարցման մասնակիցների 89,7%-ը սովորելու ընթացքում օգտվում է ԱԲ-ից, չի օգտվում 10,3%-ը:



«Ի՞նչ եք կարծում՝ ուսումնառությունը ԱԲ-ի միջոցով կարո՞ղ է ծուլացնել» հարցին մասնակիցների 58,9%-ը նշել է՝ «Մասամբ», 27,1%-ը՝ «Այո», իսկ 14%-ը՝ «Ոչ»:



«ԱԲ-ն մի՞շտ է ճիշտ տեղեկություն տալիս» հարցին մասնակիցների 90,8%-ը նշել է՝ «Ոչ միշտ», 9,2%-ը՝ «Այո, միշտ»:



«ԱԲ-ն օգնո՞ւմ է հիշել սովորածը» հարցին հարցվողների 52,5%-ը պատասխանել է՝ «մասամբ», 31,3%-ը տվել է դրական, իսկ 16,2%-ը բացասական պատասխան:



Այն հարցին, թե «ԱԲ-ի ներդրումը կրթության մեջ կարո՞ղ է փոխարինել դասավանդողին», հարցվածների 59,5%-ը պատասխանել է՝ «Ոչ», 28,8%-ը՝ «Մասամբ», իսկ 11,7%-ը՝ «Այո»:



«ԱԲ-ի օգնությամբ հնարավո՞ր է սովորել առանց դասագրքի կամ դասավանդողի կողմից տրամադրվելիք նյութի» հարցին մասնակիցների 40,8%-ը պատասխանել է՝ «Ոչ», 34,9%-ը՝ «Մասամբ», իսկ 24,3%-ը՝ «Այո»:



«ԱԲ-ն բարձրացնո՞ւմ է սովորելու հանդեպ հետաքրքրությունը» հարցին պատասխանելիս մասնակիցների 44,4%-ը նշել է՝ «Մասամբ», 31,8%-ը՝ «Այո», 23,7%-ը՝ «Ոչ»:



«ԱԲ-ն կարո՞ղ է վտանգել անձնական տվյալների գաղտնիությունը» հարցին ի պատասխան՝ մասնակիցների 48,9%-ը պատասխանել է՝ «Մասամբ», 33%-ը՝ «Այո», իսկ 18,2%-ը՝ «Ոչ»:



«ԱԲ-ն օգնու՞մ է հեշտ սովորելուն» հարցին մասնակիցների 43,6%-ը պատասխանել է դրական, 43,6%-ը՝ «Մասամբ», իսկ 12,8%-ը տվել է բացասական պատասխան։



«ԱԲ-ի շարունակական կիրառումը կարո՞ղ է բացասական ազդեցություն ունենալ սովորողի վրա» հարցին՝ հարցման մասնակիցների 49,2%-ը նշել է՝ «Այո», 38,8%-ը՝ «Մասամբ», 12%-ը՝ «Ոչ»։



«Ինչպե՞ս կգնահատեք ԱԲ-ի ազդեցությունը կրթական գործընթացի վրա» հարցին ի պատասխան՝ մասնակիցների 53,1 %-ը նշել է՝ «Արդյունավետ», 38%-ը «Քիչ արդյունավետ», 6,4%-ը «Շատ արդյունավետ», և միայն 2,5%-ը՝ «Ոչ արդյունավետ»։



Այսպիսով, հարցումներին մասնակցած երիտասարդների ճնշող մեծամասնությունը, օգտվելով ԱԲ-ից, հիմնականում կարծում է, որ ԱԲ-ի օգտագործումը կարող է ծուլացնել սովորողին։

Հարցվածների 90%-ից ավելին չի վստահում արհեստական բանականության տրամադրած տեղեկատվությանը, բայց միևնույն ժամանակ գրեթե բոլորը շարունակում են օգտվել ԱԲ-ից, ուստի կարելի է նշել, որ նաև ունեն որոշակի կախվածություն։

Հարցվողների մեծամասնությունը գտնում է, որ ԱԲ-ն չի կարող փոխարինել դասավանդողին, միաժամանակ նշում են, որ այն մեծամասամբ նպաստում է սովորածը հիշելուն, որ ԱԲ-ն ընդամենը օժանդակող գործիք է և ոչ թե հիշողության շտեմարան:

Հարցվածների մեծամասնությունը նաև նշել է, որ ԱԲ-ն չի կարող փոխարինել դասագրքին, միաժամանակ 1/3-ը նշել է, որ այն, այնուամենայնիվ, բարձրացնում է սովորելու հանդեպ հետաքրքրությունը:

Հարցվածների գրեթե կեսը վստահ է, իսկ 1/3-ն էլ կասկածում է, որ ԱԲ-ն կարող է վտանգել անձնական տվյալների գաղտնիությունը:

Մասնակիցների մեծամասնությունը հակված է նրան, որ ԱԲ-ն ամբողջությամբ կամ գոնե մասամբ օգնում է հեշտ սովորելուն: Միաժամանակ հարցվածների գրեթե 90%-ը վստահ է, որ ԱԲ-ի շարունակական կիրառումը կարող է բացասական ազդեցություն ունենալ սովորողի վրա:

Հարցվածների ընդամենը 2,5%-ն է նշել, ԱԲ-ն ունի բացարձակ անարդյունավետ ազդեցություն կրթական գործընթացի վրա:

2. Դասավանդողների հետ հարցազրույցներ

Հետազոտության շրջանակում Գավառի կրթական հաստատությունների թվով 18 դասավանդողների հետ անցկացվել են հարցազրույցներ կազմված հարցաշարով (տե՛ս Հավելված 2):/

Հարցազրույցի մասնակցած դասավանդողների մեջ գերակշռում են հումանիտար մասնագիտություններ ունեցողները: Նրանց մասնագիտական ստաժը տատանվում է 1-35 տարվա միջակայքում:

Հարցազրույցների ամփոփման արդյունքում վեր են հանվել ներքոնշյալ տվյալները:

«Ինչպե՞ս եք գնահատում Ձեր տեղեկացվածությունը արհեստական բանականության վերաբերյալ» հարցին հարցվածներից 7-ը պատասխանել են՝ «Միջին», 7-ը՝ «Բավարար», 1-ը՝ «Գերազանց», 1-ը՝ «Մասամբ», 1-ը՝ «Լավ», և 1-ը նշել է, որ չի տիրապետում:

«Օգտագործո՞ւմ եք ԱԲ որևէ գործիք» հարցին 7 դասավանդողներ բացասական պատասխան են տվել և կարծում են, որ ԱԲ-ն ունի անբարենպաստ ազդեցություն, 11-ը օգտագործում են, որոնցից 4-ը կարծում է, որ սովորողների կողմից ԱԲ-ի կիրառումը ունի մասնակի դրական ազդեցություն:

«Ի՞նչ վտանգներ կամ խնդիրներ եք տեսնում կրթական գործընթացում ԱԲ-ի լայն կիրառման դեպքում» հարցին 3 դասավանդող պատասխանել են, որ ԱԲ-ն առաջացնում է կախվածություն, 4-ը կարծում է, որ այն կարող է խաբել, հաճախ տալիս է կեղծ տեղեկատվություն, 8-ը վստահ է, որ դրա շարունակաբար կիրառումը սովորողի մոտ նվազագույնի է հասցնում վերլուծական ու քննադատական մտածողությունը, վերացնում սեփական դատողություն անելու ունակությունը: Միայն հարցվածներից 3-ն են նշել, որ ճիշտ կիրառման դեպքում ԱԲ-ը տալիս է դրական արդյունք՝ կրթական գործընթացը դարձնելով ավելի արդիական և հետաքրքիր:

«Նկատե՞լ եք, որ սովորողները՝ ԱԲ կիրառմամբ պայմանավորված, խուսափում են ինքնուրույն մտածել կամ ստեղծագործել» հարցին դասավանդողներից 16-ը պատասխանել են, որ ԱԲ-ի կիրառմամբ սովորողները խուսափում են ինքնուրույն մտածելուց, 2-ը հստակ նշել են, որ ԱԲ-ը բացասական հետևանքներ է թողնում, մասնավորապես նշել են, որ սովորողները ամբողջապես «հույսը դնում» են այդ գործիքի վրա՝ մոռանալով ինքնուրույն մտածել:

«Ինչպե՞ս եք վերաբերվում այն տեսակետին, թե ԱԲ-ն կարող է մասնակիորեն փոխարինել դասավանդողներին» հարցին ի պատասխան՝ 12 հարցվածներ կարծում են, որ դա անհնար է, քանի որ այն միայն գործիք է, չի կարող զգալ, ապրումակցել, մինչդեռ մարդկային միջանձնային շփումն անփոխարինելի է: Նշված հարցին 1 դասավանդող պատասխանել է, որ ԱԲ-ը կարող է

մասամբ փոխարինել դասավանդողներին, մյուսը կարծում է, որ ԱԲ-ը դեռ կատարելագործվելու և գերազանցելու է դասավանդողին, 1 պատասխանող կարծում է, որ ԱԲ-ը խոչընդոտ է դառնում ուսումնառության ընթացքում, իսկ 2 դասավանդողներ համոզմունք են հայտնել, որ այժմյան տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս փոխարինել դասավանդողին:

«Ինչպե՞ս եք պատկերացնում ԱԲ դերը հայաստանյան կրթական համակարգում առաջիկա 5–10 տարիներին» հարցին ի պատասխան՝ 9 դասավանդողներ գտնում են, որ այն անպայման զարգացում կապրի, ինչը կարող է նաև բացասական ազդեցություն թողնել, 3-ը կարծում են, որ այն կինտեգրվի և իր ուրույն տեղը կզբաղեցնի կրթական համակարգում, 1 պատասխանող կարծում է, որ ԱԲ-ը ժամանակի ընթացքում կնպաստի անհատականացված ուսուցմանը՝ ելնելով տվյալ սովորողի առանձնահատուկություններից և կարիքներից, 2-ն էլ նշել են, որ ԱԲ-ի կիրառումը կարգելակի անհատի ինքնուրույն մտածողության զարգացմանը: Դասավանդողներից մեկն այն կարծիքին է, որ ԱԲ-ը կախվածություն կառաջացնի, մյուսը հավատում է, որ դրական ազդեցություն կունենա, իսկ 1 դասավանդող էլ նշել է, որ ԱԲ կիրառման տարիքային շեմը դեռևս կընդլայնվի:

«Ինչպե՞ս կգնահատեք ԱԲ ազդեցությունը կրթական գործընթացի վրա» հարցին ի պատասխան՝ դասավանդողներից 7-ը նշել են՝ «Արդյունավետ», 7-ը՝ «Քիչ արդյունավետ», 4-ը՝ «Ոչ արդյունավետ»: Ոչ ոք չի նշել «Շատ արդյունավետ» պատասխանը:

Այսպիսով, հարցազրույցներին մասնակցած դասավանդողների մեծամասնությունը տեղյակ է ԱԲ-ից և այն կիրառում է, սակայն համարում են, որ ԱԲ-ն ունի բացասական ազդեցություն սովորողների վրա: Հարցվածների գերակշիռ մասը համոզված է, որ ԱԲ-ն սովորողի մոտ ճնշում է սեփական մտքի ձևավորմանը՝ նվազեցնելով բնական մտածողությունը ու խոչնդոտելով քննադատական միտքը:

Դասավանդողները նաև գտնում են, որ ԱԲ-ը կանխարգելում է ստեղծագործական ունակությունների ձևավորումը՝ «ստիպելով» սովորողներին խնդիրներ լուծելիս իրենց «հույսը դնել» ԱԲ տված պատասխանների վրա:

ԱԲ-ը չի կարող փոխարինել դասավանդողներին. սա է մեծամասնության դիրքորոշումը, քանի որ վերջինս զուրկ է մարդկային հույզերից և ապրումակցումից և հանդիսանում է կրթությանը օժանդակող գործիք:

Բոլոր դասավանդողները կարծում են, որ մոտակա տարիներին ԱԲ-ը կզարգանա և լիարժեք կներթափանցի կրթական համակարգ: Մեծամասնությունը նշում է ԱԲ բացասական ազդեցության մասին՝ մատնանշելով օգտատերերին կախվածության մեջ դնելու հանգամանքը:

Դասավանդողները հիմնականում հակված են նրան, որ ԱԲ կիրառումը կրթական գործընթացի վրա կունենա ազդեցություն, որի արդյունավետությունը ոչ միշտ է դրական լինելու:

3. Առցանց աղբյուրների ուսումնասիրություն

Հետազոտական խումբը կատարել է նաև փաստերի և թեմատիկ հոդվածների ուսումնասիրություն՝ առանձնացնելով որոշ առանցքային դիտարկումներ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ԱԲ-ի կիրառումը կրթական համակարգերում առաջին հերթին ուղղված է անհատականացված ուսուցման հնարավորությունների ընդլայնմանը: ԱԲ ամենամեծ տեսլականը ուսուցման և ուսումնական նյութերի անհատականացումն է: Անհատականացված ուսուցումը կրթական մոտեցում է, որը նպատակ ունի հարմարեցնել ուսուցումը՝ հիմնվելով սովորողների անհատական կարիքների և ուժեղ կողմերի վրա[2]:

[2] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD), «Հուսալի արհեստական բանականություն (AI) կրթության մեջ. խոստումներ և մարտահրավերներ» աշխատություն, 2020թ. ապրիլի 6

Սակայն այս միտման խնդրահարույց հետևանքներից մեկն այն է, որ աշակերտներն ու ուսանողները կարող են սկսել ավելի շատ վստահել ԱԲ գործիքներին, քան իրենց դասավանդողներին ու դասախոսներին[3]:

ԱԲ-ը խթանում է կրթության ոլորտում վարչարարական և տեխնիկական առաջադրանքների կատարման արդյունավետության բարձրացմանն ու նպաստում կրթության մեջ կառուցվածքային և ուսուցման արդյունավետության բարելավմանը[4]:

ԱԲ մուտքը կրթության բնագավառ բերում է մի նոր դարաշրջան, որը պահանջում է վերանայել ինչպես դասավանդման ձևերը, այնպես էլ կրթական համակարգերի կառավարման, վերահսկման, ստուգման և արդիականացման ամբողջ համակարգը: Հատկապես այն երկրներում, որտեղ կրթական ոլորտը բազմաշերտ խնդիրների ու հին համակարգային մտածողության բեռի տակ է, ինչպես Հայաստան Հանրապետության դեպքում, ԱԲ ներուժը կարող է հանդես գալ որպես արմատական բարեփոխումների շարժիչ ուժ, բայց միևնույն ժամանակ նաև գոյություն ունեցող խնդիրները խորացնող գործոն:

Այսպիսով, ԱԲ հետզհետե ավելի ընդգրկուն մուտքը կրթական գործընթաց այլևս անկասելի է: Սակայն դրական զարգացումներին զուգընթաց՝ այն իր հետ նաև բերում է անձնական տվյալների արտահոսք, կախվածության և սխալ տեղեկատվության ավելացման ռիսկեր: Այսքանից զատ, ԱԲ շարունակական օգտվողների մոտ տեղի է ունենում ստեղծագործական և քննադատական մտածողության նվազում: Նշենք նաև, որ ԱԲ-ը չի կարող փոխարինել դասավանդողին և դեռևս կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման գործիք է[5]:

https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2020/04/trustworthy-artificial-intelligence-ai-in-education_f1a7c415/a6c90fa9-en.pdf

[3]«Փաստ» օրաթերթ, «Ինչպե՞ս կարող է ազդել արհեստական բանականությունը ժամանակակից կրթության վրա» հոդված, 2025թ. հուլիսի 24 https://past.am/?l=am%2F&p=410818&utm_source

[4] Չեն, Լ., Չեն, Պ., և Լին, Զ. «Արհեստական բանականությունը կրթության մեջ. ակնարկ» հոդված, 2020թ. մայիսի 5 https://openresearch.amsterdam/image/2021/8/11/artificial_intelligence_in_education_a_review.pdf?utm_source

[5]«Ինչպե՞ս կարող է ազդել արհեստական բանականությունը ժամանակակից կրթության վրա», 2025թ.դեկտեմբերի 5 https://168.am/2025/07/24/2250620.html

4. Եզրակացություն

ԱԲ ինտեգրումը կրթական գործընթաց անկանխելի է: Հատկանշական է, որ հարցվածների 90%-ից ավելին, չվստահելով ԱԲ տրամադրած տեղեկատվությանը, միևնույն ժամանակ գրեթե շարունակում է օգտվել դրանից, ուստի նաև գտնվում է կախվածության մեջ: Խնդիրն ավելի է սրվում այն առումով, որ շատերը վստահ են ԱԲ ռիսկերի անխուսափելիության մեջ՝ ներառյալ անձնական տվյալների արտահոսքը, ստեղծարար մտքի ճնշումն ու սեփական մտածողության ձևավորման նվազումը, սակայն շարունակում են այն կիրառել ամենօրյա նույնիսկ հասարակ խնդիրների լուծման համար: Նաև հակասական է մեծամասնության կողմից ԱԲ տրամադրած տվյալների «ոչ միշտ է ճիշտ պատասխաններ տալիս» արձանագրման ֆոնին նրանից օգտվելու շարունակման հանգամանքը:

Դասավանդողներն իրենց հերթին չեն վստահում ԱԲ-ը, սակայն շարունակում են այն կիրառել իրենց դասապլանների ու թեմատիկ նյութերի կազմման գործում: Այս համատեքստում, ավելի քան երբևէ, կարևորվում են միջմարդկային հարաբերությունները, որոնք մեր հետազոտության տրամաբանությանը համահունչ սևեռվում են դասավանդող-սովորող հաղորդակցության ու համատեղ աշխատանքի վրա: ԱԲ-ը չունի բավականաչափ հուզական ինտելեկտ՝ քաջալերելու, մոտիվացնելու և առաջ մղելու սովորողին, ինչն անում է դասավանդողը: ԱԲ-ը նաև կարող է ծուլացնել սովորողներին: Այն ընդամենը օժանդակող գործիք է և ոչ թե հիշողության շտեմարան:

Անդրադառնալով ԱԲ՝ կրթական գործընթացում դրական կողմերին, հարկ է նշել, որ այն նպաստում է անհատականացված ուսուցմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի առանձնահատկությունները: Նաև ԱԲ դրական կողմերից հարկ է նշել վերջինիս միջոցով տեխնիկական աշխատանքների իրականացման արդյունավետության բարձրացումը:

Լավագույն դեպքում պետք է ջանալ, որպեսզի ԱԲ-ը լինի զուտ աշխատանքի արդյունավետության բարձրացման գործիք և միաժամանակ չազդել օգտագործողների առանցքային որոշումների կայացման վրա: Այս համատեքստում բոլորը՝ թե՛ դասավանդողները, թե՛ սովորողները պետք է բարելավեն իրենց գիտելիքներն ու հմտությունները ԱԲ արդյունավետ կիրառման գործում:

Հետազոտության համակարգող՝

Վարդան Գարեյան, Գեղարքունիքի մարզում ՀՎԿ համակարգող

Հետազոտությունն իրականացնող խումբ

1. Միլենա Դարբինյան, «Գավառի պետական համալսարան», Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, «Իրավագիտություն», երկրորդ կուրս
2. Մարատ Եղոյան, «Գավառի պետական Բժշկական քոլեջ», «Ատամնատեխնիկական գործ», երկրորդ կուրս
3. Էմմա Աբրահամյան, «Գավառի պետական Բժշկական քոլեջ», «Բուժական կոսմետոլոգիա», երրորդ կուրս
4. Մարգարիտա Կարապետյան, «Գավառի պետական Բժշկական քոլեջ», «Քույրական գործ», երրորդ կուրս
5. Վալենտինա Շանոյան, «Գավառի պետական Բժշկական քոլեջ», «Բուժական կոսմետոլոգիա», երկրորդ կուրս
6. Գոհար Ցոգոլակյան, «Գավառի պետական Բժշկական քոլեջ», «Քույրական գործ», առաջին կուրս
7. Եվա Համբարձումյան, «Գավառի պետական Բժշկական քոլեջ», «Քույրական գործ», առաջին կուրս
8. Էդվարդ Ներսիսյան, «Գավառի պետական Բժշկական քոլեջ», «Ատամնատեխնիկական գործ», առաջին կուրս

Հավելված 1

Սովորողների շրջանում իրականացված հարցումների հարցաթերթ
Առցանց հարցում սովորողներ

1. Սովորելու ընթացքում օգտվու՞մ եք արհեստական բանականությունից։
   1) այո 2) ոչ
2. Ի՞նչ եք կարծում՝ ուսումնառությունը արհեստական բանականության միջոցով կարո՞ղ է ծուլացնել:
   1) այո 2) ոչ 3) կախված է օգտագործման ձևից
3. Արհեստական բանականությունը սխալ տեղեկություն տալի՞ս է։
   1) այո 2) ոչ 3) երբեմն
4. Արհեստական բանականությունն օգնո՞ւմ է հիշել սովորածը։
   1) այո 2) ոչ
5. Արհեստական բանականության ներդրումը կրթության մեջ կարո՞ղ է փոխարինել ուսուցչին կամ դասախոսին։
   1) այո 2) ոչ 3) դժվարանում եմ պատասխանել
6. Արհեստական բանականության օգնությամբ հնարավո՞ր է սովորել առանց դասագրքի կամ դասավանդողի կողմից տրամադրվելիք նյութի։
   1) այո 2) ոչ 3) դժվարանում եմ պատասխանել
7. Արհեստական բանականությունը բարձրացնո՞ւմ է սովորելու հանդեպ հետաքրքրությունը։
   1) այո 2) ոչ
8. Արհեստական բանականությունը կարո՞ղ է վտանգել անձնական տվյալների գաղտնիությունը։
   1) այո 2) ոչ
9. Արդյոք արհեստական բանականությունն օգնու՞մ է արագ սովորելուն։
1) այո 2) ոչ 3) մասամբ
10. Արհեստական բանականության շարունակական կիրառումը՝ որպես տեղեկատվության աղբյուր, կարո՞ղ է բացասական ազդեցություն ունենալ ուսանողի կամ աշակերտի հոգեկան վիճակի վրա։
    1) այո 2) ոչ 3) դժվարանում եմ պատասխանել
11. Գնահատեք արհեստական բանականության կիրառման ազդեցությունը կրթական գործընթացի վրա՝ ընտրելով տարբերակներից մեկը։
    1) Միանշանակ դրական 2) Ավելի շատ դրական 3) Չեզոք 4) Ավելի շատ բացասական 5) Միանշանակ բացասական

Հավելված 2

Դասավանդողների հետ անցկացված հարցազրույցների հարցաշար

1. Խնդրում ենք նշել Ձեր մասնագիտությունը և դասավանդվող առարկան(ները)։
2. Որքա՞ն ժամանակ եք աշխատում կրթական համակարգում։
3. Ինչպե՞ս եք գնահատում Ձեր տեղեկացվածությունը արհեստական բանականության վերաբերյալ (կարճ մեկնաբանություն)։
4. Օգտագործո՞ւմ եք արհեստական բանականության որևէ գործիք (օր.՝ ChatGPT, Copilot, Grammarly, DeepSeek և այլն) Ձեր դասավանդման գործընթացում։ Եթե այո, խնդրում ենք ներկայացնել։ Ըստ Ձեզ՝ արհեստական բանականության գործիքները նպաստո՞ւմ են սովորողների մոտ կրթության նկատմամբ հետաքրքրվածության բարձրացմանը։
5. Ի՞նչ վտանգներ կամ խնդիրներ եք տեսնում կրթական գործընթացում արհեստական բանականության լայն կիրառման դեպքում։
6. Նկատե՞լ եք, որ սովորողները, արհեստական բանականության կիրառմամբ պայմանավորված, խուսափում են ինքնուրույն մտածել կամ ստեղծագործել։
7. Ինչպե՞ս եք վերաբերվում այն տեսակետին, թե արհեստական բանականությունը կարող է մասնակիորեն փոխարինել դասավանդողներին։
8. Ինչպե՞ս եք պատկերացնում արհեստական բանականության դերը հայաստանյան կրթական համակարգում առաջիկա 5–10 տարիներին։
9. Ինչպե՞ս կգնահատեք արհեստական բանականության ազդեցությունը կրթական գործընթացի վրա։

   1) Շատ արդյունավետ 2) Արդյունավետ 3) Քիչ արդյունավետ 4) Ոչ արդյունավետ